ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՄԱՄՈՒԼՆ ՈՒ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ 1880-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Գ.Ա.ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

1880-ական թթ. արևմտահայության ազգային և տնտեսական կացությունը, միջազգային իրավունքի առարկա դարձած Հայկական հարցի հետ կապվող քաղաքական ու գաղափարական իրողությունները նոր ուղղություն և հուն տվեցին Կ.Պոլսում և Զմյուռնիայում հրատարակվող հայ պարբերական մամուլին ու հրապարակախոսությանը: Այս տասնամյակից սկսած՝ լրագրությունը ձեռնամուխ է լինում ավելի լրջորեն և խորությամբ դիտարկելու ազգային իրականությունը, ազգի գոյատևելու, օսմանյան կառավարողների սաստկացրած բռնություններին դիմակայելու հնարավորությունները: Ժողովրդին մոտիկից առնչվելու, նրա հոգևոր, մտավոր ու տնտեսական դրությունը ճանաչելու, իրական պատկերացումների անհրաժեշտությունը ընդհանուր իսաստով դարձավ այդ տասնամյակի գաղութահայ մտավոր գործիչների, գրականության, ինչպես նաև լրագրության և մասնավորապես հրապարակախոսության առաջնային, թեկուզ և դեռևս ոչ միշտ լրջորեն ընկալվող խնդիրը: Եվ այս իմաստով 80-ական թվականները որոնումների, իրական կապերի ու հարաբերությունների մեջ խորանալու, Արևմտահայաստանի ճշմարտացի ճանաչողության ժամանակաշրջան էր, որ պահանջում էր նոր հայեցվածք, սթափ մտածողություն և փաստերի վրա հենվող լուսաբանումներ: Դրան նախորդող շրջանի ռոմանտիկական, հաճախ՝ վերացական ու քմահաճ պատկերացումների հրապարակախոսությունը իր տեղն էր զիջելու նոր որակների: Կ.Ություճյանի «Մասիսի» լիբերալ պատկերացումների, Օսմանյան Թուրքիայի բարեփոխման և դրանից ակնկալվող արևմտահայության կացության փոփոխությունների վերաբերյալ հույսերի կրախը հասցրեց այդ թերթի հասարակական ազդեցության անկմանը: Ինքը «Մասիսը», որ դժվարությամբ էր ընկալում փոփոխված իրականության ընթացքն ու պահանջմունքները և մինչ այդ զերծ էր մնացել գրաքննական խստություններից, 1880թ. դարձավ Համիդյան գրաքննության առաջին զոհերից մեկը: Հարստահարությունների վերաբերյալ հոդված տպագրելու համար թերթը դադարեցվեց 1880թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին[1]:

Հայ մշակույթի դեմ ուղղված բռնությունների նոր պայմաններում մամուլը ևս խստորեն պատժվում էր Հայկական հարցին, գավառական հարստահարություններին անդրադառնալու համար: Անհրաժեշտ էր ստեղծել այնպիսի պարբերական, որը դեպի իրեն ձգեր գրական և հրապարակախոսական կարող ուժերին, համախմբեր նրանց՝ լուսաբանելու Արևմտահայաստանի և գաղութահայ բնակչության կյանքի բոլոր ծալքերը, ընթերցողին ներկայացնելու իրականությունը առանց զարդարանքների կամ ենթադրությունների: Այս նպատակն էր ընկած, փաստորեն, 80-ական թթ. նոր գրական և լրագրական շարժման մեջ, որ արևմտահայ գրականության մեջ համարվում է ռեալիստական շարժման սկզբնավորում: Այս ընթացքը

---

[1] *Տե՛ս Մասիս, 25.XI. 1880:*

գաղութահայ հասարակական մտքի և հրապարակախոսության մեջ պայմանավորվում էր որոշակի շրջադարձով դեպի գավառը, բուն ժողովրդական կյանքը: Սամույր ևս համընթաց էր գնում գրական շարժմանը՝ իր առջև դրված խնդիրների մեջ առանձնացնելով ժողովրդի բոլոր խավերի կյանքի ուսումնասիրությունը, նրանց կենցաղի, բարոյականության ու հոգեբանության հետազոտությունը՝ իրենց բազմաշերտ դրսևորումների մեջ: Պետք էր պատրաստել կրթված և սթափ մտածող սերունդ՝ նոր կենսազգացողությամբ, գաղափարներով և իրականության նկատմամբ ունեցած քննադատական լրջմիտ վերաբերմունքով: Այս նոր միտումները լրագրության մեջ ձևավորվեցին և իրենց զարգացումը ստացան «Արևելք» թերթի հրատարակությամբ (1884թ. հունվար): Նորություն էր թերթի հրատարակչական ու խմբագրական գործերի առանձնացումը: «Արևելքի» հրատարակչական և ֆինանսական խնդիրներով զբաղվում էր Նրա՝ ազդեցիկ դրամատերերից կազմված վարչությունը: Ի պատիվ այս վերջինի, պետք է ասել, որ թերթի հրատարակության սկզբնական շրջանում Նրա անդամները կարողացան «Արևելքի» խմբագրական մարմնի մեջ ներգրավել Կ.Պոլսի երիտասարդ և տաղանդավոր ուժերին: Իրոք, թերթի խմբագրակազմի մեջ էին ընդգրկվել Ա.Արփիարյանը, Լ.Բաշալյանը, Տ.Կամսարականը, Բ.Քեչյանը, Մ.Կյուրճյանը և ուրիշներ: Գր.Զոհրապի աշխատակցությունը ևս «Արևելքին» տվեց հրապարակախոսական փայլ և հասարակական ազդեցություն: Իր՝ Գր.Զոհրապի կարծիքը «Արևելքի» գործունեության վերաբերյալ, ցույց է տալիս, որ թերթի գործիչները իրենց խնդրին մոտեցել էին ամենայն լրջությամբ և լրագրական որոշակի սկզբունքներով: Էնդսմին, Զոհրապը ուշադրություն է դարձնում ոչ միայն «Արևելքի» թեմաներին, այլև գաղափարական ուղղությանը, լեզվին: Դիտելով, որ Կ.Պոլսի Նոր լրագրությունը սկսվում է «Արևելքով», Նա նկատում էր, որ Նրա էջերում «Անհատական գծուծ խնդիրներն ու վեճերը տեղի տալով ընդհանուր տեսություններուն, հայ լեզուն այս կամ այն խմբագրապետի գծած անձուկ սահմանները կոխոտելով՝ վերստացած էր ժողովրդյան բարբառի անկախությունը, դադրելով արհեստ մը լինելե՝ արվեստ դառնալու համար... Հասարակական պետքերու ըմբռնումը: Ահավասիկ նոր լրագրությունը» [2]:

Այս «նոր լրագրությունը» ամենից առաջ պետք է որոներ և կայացներ նոր ուղղություն՝ հանրությանը ներկայանալով իբրև առաջադիմական և ժամանակակից պարբերական, որը մերժում է արմատականության և պահպանողականության ծայրահեղությունները: Այլ կերպ ասած՝ «Արևելքը» նախընտրելի էր համարում ծայրահեղությունները բացառող միջին գիծը, որ պետք է հենվեր անցյալի ազգային արժեքների վրա և, մյուս կողմից, իրականացներ հասարակության մտավոր ու հոգևոր բարեփոխումն ապահովող գաղափարների ու պատկերացումների քարոզչությունը: Հաշվի էր առնվում գրաքննական բռնությունների վտանգը, որ կախված էր Օսմանյան Թուրքիայում հրատարակվող մամուլի գլխին և որը ստիպում էր գործածել չափավոր լեզու: Այս պատճառով, նշում էր թերթը, «Արևելքը» պիտի ջատագովե ազգային ներքին բարենորոգման դատն, ավելի ազատական, քան արմատական, և ավելի պահպանողական, քան հետադիմական ոճով» [3]: Կարծում ենք, որ դժվար է առավել բնութագրական գծերով ցույց

[2] Գր.Զոհրապ, Երկերի ժողովածու, հ. 2, Ե., 1962, էջ 217:
[3] Արևելք, 14. I. 1885:

տալ 80-ական թթ. արևմտահայ ժողովրդավարության նկարագիրը և գործելակերպը, որ ենթադրում էր մի հայտնի չափավորություն, որ սակայն, այս ուղղության համար զգալի հնարավորություններ էր ստեղծելու լիբերալ և պահպանողական մտայնության առաջադեմ գործիչների հետ դաղափարական շփումների համար:

Լրագրական մատուցման տեսակետից ևս «Արևելքը» բերում էր իր նորությունները. նրա էջերում արևմտահայ լրագրության մեջ աննախընթաց զարգացում ստացան երեք ժանրեր՝ խմբագրականը (առաջնորդող), քրոնիկը, ինչպես և ակնարկի ժանրը: «Արևելքում» տպագրած իր խմբագրականներով Ա.Արփիարյանը հետևողականորեն և շարունակ ուշադրության կենտրոնում էր պահում հասարակականորեն կարևոր բազմաթիվ խնդիրներ (պատրիարքարան, սահմանադրական մարմիններ, գավառական կյանք, ազգային կրթական ու բարեգործական հաստատություններ և այլն): Քրոնիկի ժանրը հնարավորություն էր տալիս թռուցիկ, բայց և արագորեն անդրադառնալ օրվա կարևոր լուրերին՝ ինչպես Կ.Պոլսում, այնպես էլ գավառում, Արևելյան Հայաստանում ու գաղթօջախներում: Իսկ քրոնիկներով «Արևելքը», առաջին անգամ արևմտահայ մամուլում, սկիզբ էր դնում եվրոպական լրագրական լրատվության ժանրին՝ այս հասկացության արդիական իմաստով: Ակնարկի ժանրը «Արևելքում» առավել քան ընդգծված ի հայտ է գալիս դիմանկարային ակնարկի ձևով, որի երգիծական կատարման ամենափայլուն և նախորդող օրինակը տվել էր Հ.Պարոնյանը՝ դեռևս նախորդ տասնամյակներին: Սակայն «Արևելքի» դիմանկարային ակնարկները հետապնդում են միանգամայն այլ նպատակ՝ հիմնականում վերհանել մոտիկ անցյալի, այլև ժամանակակից նշանավոր ազգային գործիչներին, որոնք նպաստել են ազգի հոգևոր ու մտավոր առաջընթացին: Անշուշտ, ժանրային այս հնարավորությունների օգտագործումը ևս «Արևելքը» դարձնում էր այնպիսի թերթ, որը ոչ թե սոսկ հետաքրքրություն էր հարուցում, այլ այդ հետաքրքրությունը դարձնում էր տպավորիչ միջոց՝ հանրային կարծիքի վրա ազդելու և հանրային հեղինակություն նվաճելու համար: Նշված ժանրերով «Արևելքում» հանդես էին գալիս Ա.Արփիարյանը, Գր.Զոհրապը, Լ.Բաշալյանը և մյուսները: Ա.Արփիարյանի «Օրվան կյանքը» խորագրով քրոնիկներն ու առաջնորդողները, Գր.Զոհրապի ակնարկները, ուղեգրական նոթերը և այլ գործերը, Մ.Կյուրճյանի, Տ.Կամսարականի և այլոց նյութերը փաստորեն ստեղծեցին լրագրական նոր ոճ, որը հույժ տարողունակ էր թերթի բովանդակությունն ու ուղղությունը արտահայտելու, առավել ևս՝ նրա հասարակական միտումները ավելի անկաշկանդ դրսևորելու համար:

«Արևելքի» հասարակական ազդեցության պատճառը մի հայտնի չափով պետք է որոնել նրա գավառական թղթակցությունների ճշմարտացիության, չիտակության և շարունակականության մեջ: Թերթն անդրադարձել է Արևմտահայաստանի բազմաթիվ գավառների հայության տնտեսական ծանր իրավիճակին, օսմանյան իշխանությունների հարկային կեղեքող քաղաքականությանը[4], գավառներում կատարվող մշտական հարստահարություններին և օտար ու ազգային զորեղների կամայականություններին: Ի դեպ, գրաքննական նկատառումներով «Արևելքը» հարստահարությունները

[4] Նույն տեղում, 4. VI, 15. VIII. 1884:

հիշում է հիմնականում դրանց դեմ բողոքների կապակցությամբ, մանավանդ այն դեպքերում, երբ բողոքողների մեջ կան նաև թուրք բնակիչներ: Արդարացիության, նաև հասկանալի ինքնապահովագրման այս մոտեցմամբ թերթն անդրադարձել է 1885թ. հունվարին Խնուսի ժողովրդի բողոքին, երբ ժողովրդի կողմից Կարին՝ պատգամավորություն էր գնացել (3 թուրք և 4 հայ)՝ բողոքելու հարկահավաքման ձևերի մեջ ապօրինություններ թույլ տալու դեմ :

Գավառի կացության բարեփոխման նպատակով «Արևելքը» առաջարկում է այն պահել Կ.Պոլսի Ազգային վարչության, պատրիարքի ու երեսփոխանների ուշադրության կենտրոնում, օգնել գավառացուն նյութապես՝ ստեղծելով փոխատվության հիմնադրամներ, սատարել նրան՝ իր հայրենիքում մնալու և գավառի քայքայումը կանխելու նպատակով: Ելնելով գավառի, և առհասարակ, նաև քաղաքային հայ բնակչության շահերից՝ «Արևելքը» առաջարկում էր բարելավել արևմտահայ սահմանադրական մարմինների գործունեությունը, դրան տալ, ըստ հնարավորին, նպատակասլաց ընթացք: Այստեղից՝ «Արևելքի» առաջադեմ հրապարակախոսների քննադատական դիրքորոշումը Ազգային ժողովի պաշտոնատար անձանց դեմ: Ազգային ժողովի առաջատար գործիչներից Հ.Նուրյանը, էֆենդիական դասի այլ մարդիկ, որպես իրենց ժողովրդին խորթ, նրան օտարացած տարրեր, քանիցս քննադատության թիրախ են դարձել «Արևելքի» և հետագայում «Մասիսի» էջերում:

Անդրադառնալով հասարակական մտքի, գրականության և առհասարակ հայ իրականության վերաբերյալ այս շրջանում կատարված բեկումնային փոփոխություններին, ակադ. Ս.Սարինյանը գրում է. «Հայ հասարակական զարգացման այն շրջանը, որ ընդունված պարբերացմամբ կոչվում է 90-ական թվականներ, ըստ էության, սկիզբ է առնում 80-ականների կեսերից: Բեկման հոգեբանական ձևահայտը հայկական ռոմանտիզմի անկումն էր, ռոմանտիզմի թե տնտեսական, թե քաղաքական, թե ազգային և թե դրական առումներով: Հայ աշխարհայացքը անցում է կատարում իրապաշտության» [5].

Այսպիսի անցումը կատարվում էր համազգային ընդգրկումներով, իբրև ամբողջություն կազմող գործընթաց, որ պայմանավորված էր հայ զույգ հատվածների հոգևոր ու մտավոր չփումների և մերձեցման աննախընթաց չափերով: Այդ չափերը երկուստեք, և ըստ ամենայնի, ներկայացնում էր մամուլը, որի առավել լայնախոհ ու լիարժեք իրականացնողներից էր «Արևելքը»: Իրոք, «Արևելքի» ուղղության մասին խոսելիս լուրջ ուշադրություն պետք է դարձնել Գր.Արծրունու հետ Ա.Արփիարյանի և նրա մերձավոր հրապարակախոսների փոխադարձ գաղափարագործնական կապերին: «Միացյալ ընկերությանց» գործունեությունը ֆինանսավորելու, ինչպես և կազմակերպչական հիմքի վրա դնելու առնչությամբ «Արևելքի» գործիչների ու Գր.Արծրունու չփումները նշանակալիորեն նպաստեցին ոչ միայն այդ ընկերության արդյունավետությանը, այլև Ա.Արփիարյանի ազատամտական հայացքների զարգացմանը, անշուշտ, Գր.Արծրունուն և, մի հայտնի չափով, Ռաֆֆու ազդեցության ներքո: Ի դեպ, «Արևելքի» շուրջ խմբված վերոհիշյալ գրողներն ու հրապարակախոսները ամենևին էլ սեպ

[5] Նույն տեղում, 30. I. 1885:
[6] Ս.Սարինյան, Հայ գաղափարաբանություն, Ե., 1998, էջ 55:

չէին խրում Ռաֆֆու և Գր.Արծրունու հայացքների միջև և կամ էլ հակադրում նրանց, որ շատ ավելի ուշ ժամանակների արդյունք պետք է լիներ, և որին այստեղ հարկ չկա անդրադառնալու: «Մշակի» այս անհատականությունները խորապես հարգելի և ընդունելի էին «Արևելքի» երիտասարդ գործիչների համար: Դրա վկայությունն են Ա.Արփիարյանի տևական աշխատակցությունը «Մշակին», արևելահայ նշանավոր խմբագրի գործունեության բարձր գնահատականը «Արևելքում»[7], ինչպես և Ռաֆֆու «Խամսայի մելիքությունների» տպագրությունը այդ թերթում:

1885թ. «Արևելքում» հայտնված «Ռուսական սուրհանդակ» խորագիրը, որ հետամտում էր արևմտահայ ընթերցողին ծանոթացնել Ռուսաստանի, Անդրկովկասի կյանքին և իրականությանը, դարձյալ վկայում է Ա.Արփիարյանի՝ «Մշակի» հետ ունեցած գաղափարական ընդհանրությունների և «Արևելքի» հրապարակախոսների՝ Ռուսաստանի նկատմամբ համակրանքների մասին:

Դժվար է գերագնահատել «Արևելքի» դերը արևմտահայ գրականության մեջ ռեալիզմի զարգացման և դրա տեսական հիմնավորման գործում: Ռեալիստական գրականության և գեղագիտության զարգացումը արևմտահայ կյանքում պայմանավորված էր, ինչպես տեսանք, հենց 80-ական թթ. իրականության պահանջմունքներով: Գավառի և քաղաքի հայ բնակչության կյանքի արտացոլումը այդ գրականությունը դարձնում էր ազգի ինքնաճանաչողության, սեփական գնահատական կայացնելու իրատեսական միջոց, անհատի և հանրության համար: Թեմաների, կերպավորման, վերլուծությունների մեծ հնարավորությունը այս ուղղությանը ընձեռում էր ընթերցողին հասցնելու խոր և կենսական ճշմարտություններ: «Արևելքի» հեղինակների նորավեպերը, վիպակներն ու գեղարվեստական այլ գործերը հեղաշրջում առաջ բերեցին գրականության մեջ և տասնամյակների համար լայն հուն բաց արեցին՝ ապահովելով նրա ընթացքը: Այս իմաստով «Արևելքը» հայ իրականության մեջ այն եզակի պարբերականներից է, որը ոչ միայն սկզբնավորեց նոր լրագրություն, այլև նոր ուղղություն գրականության մեջ, որի աշխատակիցները հանդես եկան իբրև և մեկի, և մյուսի տաղանդավոր մշակողներն ու զարգացնողները: Սրանով հանդերձ, 1880-ական թթ. ռեալիստական գրականության գեղագիտական մեկնաբանության ու հիմնավորման գործում չպետք է անգիտանալ Զմյուռնիայում Գր.Մսերյանի խմբագրությամբ հրատարակված «Մետեորա» տարեգիրքը (1880 - 1881): Այս տարեգիրքը, ինչպես հայտնի է, իր լուրջ տեղն ունի XIXդ. 2-րդ կեսի ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսության, ինչպես և ռեալիստական գեղագիտության սկզբունքների տարածման ասպարեզում[9]: Տարեգրքի «Գիտական» բաժնում տպագրվել է Գ.Փիշարի «Վարդապետություն իրականին» գործը՝ Գր.Մսերյանի որոշակի

---

[7] Լ.Մուրադյան, Արփիար Արփիարյան, Կյանքը և ստեղծագործությունը, Ե., 1991, էջ 26 - 27:

[8] Ա.Խառատյան, Արևմտահայ մամուլը և գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում, Ե., 1989, էջ 251:

[9] Տարեգրքի մասին հանգամանորեն տե՛ս Մ.Հակոբյան, «Մետեորա» հանդեսը արևմտահայ լուսավորական-գեմոկրատական շարժման մեջ Ե., 1977: Վ.Զարդարյանը նշում է, որ գրաքննության խստության պայմաններում «Մսերյան ստիպվեցավ փակել տպարանը և քաշվիլ հանրային գործունեութենե և սակայն, մասնավորելով իր եռանդուն փափաքը Հայկական դատի մասին» (Վ.Զարդարյան, Հիշատակարան, Կահիրե, 1940, էջ 41):

մտահղացման համաձայն: Այն պետք է ժողովրդականացներ պոզիտիվիզմի իմաստասիրական սկզբունքները: Ռեալիստական գեղագիտությունը աղերսվում էր պոզիտիվիզմին, ինչպես ցույց է տալիս ֆրանսիական ռեալիզմի պատմությունը[10], մասնավորապես, կենսական իրողությունների սթափ դիտարկման և փորձն այդ իրողություններից բխեցնելու սկզբունքի տեսանկյունից: Փորձից բխող վերաբերմունքը, ի վերջո, հոգեբանության որոշակի հիմքերը և վերջինի թելադրանքով մարդու վարքագծի դրսևորումները, դառնում էին գրականության այն կարևոր հատկանիշները, որով ռեալիզմի ուղղությունը արմատապես տարբերվում էր փորձից անկախ ենթադրություններ վկայակոչող ռոմանտիկական ուղղությունից: Եվ այս իմաստով պոզիտիվիզմի փիլիսոփայությունն ուղղվում էր ռոմանտիզմի գեղագիտության դեմ: Պատահական չէ, որ Գր.Մսերյանը տպագրեց «Վիկտոր Հյուգո և Էմիլ Լիթրե» վերնագրով Է. Զոլայի հոդվածը, որտեղ վերջինս կենսական իրողությունների ճշմարտացիությունը բարձր էր դասում ռոմանտիզմի վերացական պատկերացումներից: Հյուգոյի ռոմանտիզմի հանդեպ այս կեցվածքով Գր.Մսերյանը փաստորեն բանավեճ էր մղում ֆրանսիացի մեծ ռոմանտիկի հայ հետևորդների հետ, որոնց համար նա պաշտամունքի առարկա էր դարձել 1860 - 70-ական թթ., և որի երկերի թարգմանություններով լեփ-լեցուն է նաև հետագա շրջանի հայ մամուլը[11]: Ակներև է, որ Զոլայի գեղագիտական հայացքների և ֆրանսիական պոզիտիվիզմի գրույթների մատուցմամբ «Մնտեորան» հարթում էր 1880-ական թթ. հայ ռեալիստական գրականության ուղիները[12]:

Նշված տասնամյակի արևմտահայ նոր լրագրությունն ու գրականությունը զարգացման կարևոր ազդակներ ստացան նաև Ա.Արփիարյանի խմբագրած «Մասիսում» (1887 - 1889): «Մասիսը» ոչ միայն խորացրեց «Արևելքի» սկզբնավորած հրապարակախոսական ուղղությունը (պարբերականին աշխատակցում էին «Արևելքի» գրագետները), այլև դրան տվեց որոշակիորեն կազմակերպված ու նպատակասլաց ընթացք: Ա.Արփիարյանը

---

[10] М.К.Клеман, Проблемы реализма во французской литературе и история нашего романа Эмиля Золя (Эмиль Золя. М., 1934, с. 5 – 68).

[11] Հայտնի են Գր.Ջիլինկիրյանի և Վ.Հյուգոյի փոխանակած նամակները՝ «Թշվառների» հայերեն թարգմանության առթիվ: Մեծ գրողի հետ նամակագրություն է ունեցել նաև արևմտահայ գրագետ Ա.Մոսիկյանը, որը նրան խնդրել էր կարծիք հայտնել իր մի ստեղծագործության մասին: Ստորև մեջբերում ենք Հյուգոյի պատասխանը նրա երկրորդ նամակին.

«Բարիզ, 17 փետրվար, 78

Գ.Արտակ Մոսիկյան

Ժամանակին կընդունիմ ձեր մի պերճախոս նամակ, որ ուղղված էր ձեր եղբայրներեն մին:

Հայ եք Դուք: Կսիրեմ այդ ազգ, կհարգեմ զայն՝ Դուք քաջ գիտեք զայս: Հայ ազգն պարտի երջանիկ լինել միանգամայն և պարծիլ՝ միայն և միայն, զի մարդ մ'ունի Ձեզ նման, լի՝ այնքան ազնիվ գաղափարներով:

Իմ կարծիք կխնդրեք Ձեր վեմ էջերու համար: Կընդունիմ և կտամ Ձեզ զայն: Մի մեծ միտ և գեղեցիկ հոգի ունեք Դուք: Կհիանամ Ձեր հանճարի և տաղանդի վրա, որք չատ հույս կտան ապագային համար: Ձեր հասակին մեջ ամեն բան արև և աստղ է Ձեզ համար:

Շարունակեցեք և հուսացեք:

Հաճեցեք ընդունել, պարոն, շնորհակալություններուս և հիացումիս հավատին:

Վ.Հ., (Թերճեմանը էֆքյար, Կ.Պոլիս, 1878, № 193):

[12] Է.Զոլայի վերոհիշյալ հոդվածը տե՛ս Մնտեորա, հ. Դ, 1881, էջ 26 - 35:

հետևում էր նոր «Մասիսի» ծրագրի իրականացմանը ուժեղացնելով դրա ազգային և գիտական մասը, սրելով հոդվածների քննադատական ոգին, առավել ժողովրդական դարձնելով նրա լեզուն, լուսաբանելով ազգի տնտեսական դրությունը տպագրելով այս բնագավառին վերաբերող հոդվածներ, թղթակցություններ և այլն[13]: «Մասիսը» հատուկ ուշադրություն էր դարձնում Կ.Պոլսի և գավառների ազգային մարմինների գործունեությանը, քննադատական բնութագրերով հանդես գալիս երեսփոխանական վերնախավի և երևելիների դեմ: Նրա էջերում դատափետվում է Ազգային ժողովի ատենապետը, ցուցադրվում են երեսփոխանների կամայականությունը, անձնական նկատառումներին նախապատվություն տալը նրանց գործողություններում: Այսպես, պարբերականը համարձակորեն նկատում էր, որ Հ.Մերեմ-Գուլին (Ազգային ժողովի ատենաետ) և Սիմոն Մագուտը իրենց բարձր դիրքին են հասել իրենց դասային (էֆենտիական) արտոնությունների շնորհիվ՝ չվայելելով երեսփոխանների համակրանքը և քվեների նվազագույն առավելությամբ[14]: Ազգային ժողովի հասցեին Ա.Արփիարյանի քննադատական սուր ելույթները հասցրին նրան, որ խառն ժողովը 1887թ. մայիսի 7-ին հատուկ որոշմամբ դատապարտում էր «Մասիսի» «անպատշաճ խոսքերը» և պահանջում էր նրանից՝ «զգուշանալ ազգային գործոց և ժողովո մասին այսպիսի անհիմն և անպատշաճ հրատարակություններ ընելե», հակառակ դեպքում, սպառնում էր գործի դնել «հարկ եղած օրինական միջոցներն»[15]: Իր խմբագրականում Ա.Արփիարյանը պատասխանեց, որ մազաչափ անգամ չի շեղվելու իր ընթացքից և քամահրում է Հ.Նուբյանի ու պատրիարք Հ.Վեհապետյանի սպառնալիքները[16]: Հետագայում «Մասիսը» քննադատական նույն ուղեգիծը որդեգրեց պատրիարք Հ.Աշըգյանի հանդեպ, որը և առիթ դարձավ վերջինիս համար՝ խափանելու «Մասիսը» (դադարել է 1889թ. հունվար-օգոստոս ամիսներին)[17]:

Իր իսկ աշխատակիցների նախասիրությունների բերումով (աշխատակցում էին Լ.Բաշալյանը, Մ.Կյուրճյանը, Աղ. Փանոսյանը և ուրիշներ) «Մասիսն» ակտիվորեն անդրադառնում էր գրական ու հասարակական կյանքին: Ինչպես «Արևելքում», այստեղ ևս նոր դրական շարժման ներկայացուցիչները գրականությունը դիտում են կյանքի ճանաչողության, հասարակականորեն կարևոր խնդիրների, ազգին իրական ճշմարտություններ ներկայացնելու տեսակետից: Այստեղ գեղարվեստական մարմնավորում են ստանում չգունազարդված կապերն ու հարաբերությունները, հայ մարդը՝ իր միջավայրից բխող և իրեն հատուկ մտածողությամբ ու հոգեբանությամբ: Նույն ուղիով ընթացող պարբերականի հրապարակախոսության մեջ իրենց հասարակական ու մշակութային ընդհանրացնող գծերով ի հայտ են գալիս իրական մարդիկ՝ ազգային նշանավոր դեմքեր, մասնավորապես մտավորականներ՝ գրողներ, խմբագիրներ, ուսուցիչներ, որոնք ներկայացվում են իրենց գործունեությանն ու խառնվածքին բնորոշ գծերով: «Մասիսը» տպագրեց Գր.Զոհրապի «Ներսեն», «Այրին», «Փոթորիկը», «Պարահանդեսին

[13] Մասիս, 1888, № 3912, էջ 2:
[14] Նույն տեղում, էջ 2 - 3:
[15] Նույն տեղում, 1887, № 3873, էջ 155:
[16] Նույն տեղում, էջ 149:
[17] Այս խափանումից առաջ «Մասիսը» շաբաթերթ էր, իսկ վերահրատարակվելուց հետո՝ 1889թ. սեպտեմբերից՝ կիսամսյա:

վաղորդայնը» և այլ գործեր, Ա.Արփիարյանի «Դերասանուհին» նովելը, ազգային տեսությունները, քրոնիկները, Հ.Պարոնյանի ստեղծագործություններից, այդ թվում և «Պռույգը», Լ.Բաշալյանի «Ղալաթիո բեսդը», «Սրբուհի մայրապետը», Տ.Կամսարականի, Ադ.Փանոսյանի, Ե.Ստյանի, Հր.Ասատուրի, Սիպիլի, Ե.Տեմիրճիպաշյանի և այլոց արձակ և չափածո երկերը: Հրապարակախոսական և գեղարվեստական ժանրերի միահյուսման օրինակ կարող են լինել Գր.Զոհրապի թղթակցությունները «Արշալույս Արարատյանի» վաղամեռիկ խմբագիր Հ.Սվաճյանի, Հակոբ Գուրգենի, Լ.Բաշալյանի հոդվածները Պ.Ադամյանի և այլոց մասին: Ա.Արփիարյանը շարունակեց և խորացրեց արևելահայ գրականության և լրագրության հետ հաստատված կապերը, որոնք նոր որակ էին ստացել դեռևս«Արևելքի» էջերում: Իրոք, 80-ական թթ. «արևմտահայ գրական շարժման առանցքային հարցերից մեկը ազգի երկու հատվածների գրական-կուլտուրական միասնության ստեղծումն է, մերձեցում՝ արևելահայ գրական-հասարակական կյանքին» [18]: Դրա կոնկրետ դրսևորումներից են Ա.Արփիարյանի «Արարատ. կովկասյան գրականություն», «Արվեստահանդես գնացող կովկասցին», Լ.Բաշալյանի «Հանդես գրականակական և պատմական» և այլ նյութեր[19]: Արևելահայ գրականության բովանդակությունն ու միտումները «Մասիսի» գործիչներին մղում էին ծանոթանալու նաև ռուս գրականությանը: Պարբերականը տպագրեց Մ.Լերմոնտովի «Դասալիքը» (թարգմ. Ադ.Փանոսյան), Ի.Տուրգենևի երկերը, հոդվածներ Ա.Պուշկինի, ռուսական վեպի վերաբերյալ և այլն[20]: Գաֆֆու թարգմանած՝ Պ.Զուբովի «Ղարաբաղի աստղագետը» «Մասիսը» արտատպեց «Մշակի» 1887թ. համարներից: Պարբերականն իր ընթերցողներին էր հրամցնում եվրոպական գրականության ընտիր էջերը (Լամարտին, Վ.Հյուգո, Վ.Սարդու, Է.Մանվիլ, Մ.Ռոլինա, Ս.Պրյուդոմ, Ֆ.Գոբբրե և ուրիշներ):

Ա.Արփիարյանը «Մասիսը» խմբագրել է 1887թ. հունվարից մինչև հունիս և, 1888թ. մայիսից «Մասիսի» տնօրինությունը դարձյալ ստանձնելով, խմբագրել է այն մինչև նույն թվականի դեկտեմբերի 14-ը, որից հետո «Մասիսը» կրկին դադարել է և վերահրատարակվել, ինչպես տեսանք, 1889թ. սեպտեմբերին՝ հետագա ամիսներին ևս ամբողջացնելով 1880-ական թթ. գրական հրապարակախոսական շարժման նկարագիրը արևմտահայ իրականության մեջ:

Այսպիսով, 1880-ական թթ. արևմտահայ լրագրության նոր որակները սկիզբ են առնում նախ «Արևելքի» ապա «Մասիսի» էջերում: Նոր լրագրության հատկությունները այս կամ այն չափով իրենց զգացնել են տալիս նաև Կ.Պոլսի և Զմյուռնիայի մի շարք այլ հրատարակություններում, բայց նպատակասլաց և ամբողջական տեսքով՝ միայն այս երկու պարբերականներում:

Արևմտահայ լրագրության նոր փուլը հատկանշվում է ամենից առաջ լրատվության իրատես և կոնկրետ բովանդակությամբ. լրատվության ցաքուցրիվ, վերացական բնույթը, որ հիմնականում բնութագրական էր 1840 - 1870-ական թթ. մամուլին, փոխարինվում է հասարակությանը

---

[18] Հայ նոր գրականության պատմություն, հ. 3, Ե., 1964, էջ 77:

[19] Մասիս, 1889, № 3924, էջ 12 - 14, № 3925, էջ 23 - 29, № 3926, էջ 45 - 48, № 3936, էջ 215 - 216:

[20] Նույն տեղում 1887, № 3875, էջ 166 - 167, 1886, № 3803, էջ 533 - 540, 1887, № 3860, էջ 49 - 50:

հուզող կայուն տեղեկատվությամբ, իրական կապերի ու հարաբերությունների վերհանումով՝ սկսած հասարակական կարևոր խնդիրներից և վերջացրած անհատների գործունեության լուսաբանումով, առօրեական իրողությունների անդրադարձով: Լրագրության զարգացումը իր հետ բերում է նաև լրագրական ժանրերի բազմազանություն և զարգացում: Այս տեսակետից պետք է առանձնացնել քրոնիկի՝ իբրև լրագրական լրատու ժանրի հաստատումը: Լրագրության վերաբերյալ այս նոր պատկերացումները մի հայտնի չափով համապատասխանում էին նոր գրական շարժման՝ ռեալիստական գրական շարժման ընթացքին ու բովանդակությանը:

Նոր լրագրության և նոր գրականության այս համատեղ հայտնությունն ու զարգացումը ընթանում էին գիրկընդխառն տեսքով, ուստի և բնավ պատահական չէ, որ այս երևույթը դիտելի է միևնույն հրատարակություններում և մեկի, և մյուսի բովանդակությունն ընդգրկող «Արևելք», իսկ այնուհետև՝ «Մասիս» պարբերականներում:

ЗАПАДНОАРМЯНСКАЯ ПЕЧАТЬ И ПУБЛИЦИСТИКА В 1880-ЫЕ ГГ.

Г.А.СОГОМОНЯН

Резюме

В 1880-е годы, в результате изменившихся национальных и экономических условий, начался новый этап развития западноармянской журналистики. Издания этого периода способствовали формированию общественного мнения, выявлению реальных общественных связей и отношений. Этот процесс привнес в журналистику новые жанры. Новое представление о журналистике в известной мере соответствовало процессу становления нового литературного движения – реализма. Не случаен тот факт, что западноармянские писатели-реалисты 1880-х гг. А.Арпиарян, Г.Зограб, Т.Камсаракан, А.Башалян, М.Кюрян (Гранд), Е.Отян и другие на страницах газет "Аревелк" и "Масис" выступали как публицисты нового поколения и предвестники новой журналистики.